

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՆ ՎՐԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՆՈՒԹՅԱՆ ՆԱԳՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

30 նոյեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի
(զեկուցող), Ն. Նազարյանի, Վ.Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Զեյնալյանի,

գործով որպես պարասխանող ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնա-
կան ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արվակ Զեյ-
նալյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդ-
վածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը
համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ա. Զեյնալյանի՝ 08.06.2010թ. ՆՏ սահմանադրական
դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարաս-
խանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՆՏ վարչական դատարանի

վարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նահրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Դիմողի կողմից սկզբնապես վիճարկվել են ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերը: ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 25.06.2010թ. ՍԴԴԿՈ/1-17 որոշմամբ դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասով, իսկ 7-րդ կետի մասով դիմումի ընդունումը մերժվել է՝ դիմողի նկատմամբ կիրառված չլինելու պարճառաբանությամբ:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նայցադիմումին կցվող փաստաթղթերը» վերաբառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է.

«1. Նայցադիմումին կցվում են՝

...

6) հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պարճենները (եթե դրանք հնարավոր է պարճենահանել) պարասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապարասխան, սրանալը հավաստող փաստաթղթերը.

...»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետեւյալին: Դիմողը 08.09.2009թ. թիվ 61, 62, 63, 64, 65, 66 գրություններով Երեւանի քաղաքապետին է իրագեկել համապարասխանաբար՝ 2009 թվականի սեպտեմբերի 19-ից 24-ը Երեւան քաղաքի՝ Մարենադարանին հարող փարաճքում ժամը 18:00-22:30 զանգվաճային հրապարակային միջոցառումներ կազմակերպելու մասին: 12.09.2009թ. նրա կողմից հայցադիմում է ներկայացվել ՆՏ վարչական դատարան՝ «2009 թվականի սեպտեմբերի 19-24-ի հանրահավաքներ եւ երթեր անցկացնելու իրավունքը ճանաչելու պահանջի մասին»:

ՆՏ վարչական դատարանը 12.09.2009թ. կայացրել է «Նայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ ելնելով այն հանգամանքից, որ ներկայացվաճ հայցադիմումը եւ կից փաստաթղթերը չեն համապարասխանում ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվաճի պահանջներին: ՆՏ վարչական դատարանի

հիշյալ որոշումը դիմողը 17.09.2009թ. բողոքարկել է ՆՏ վարչական դատարան: ՆՏ վարչական դատարանի՝ 28.09.2009թ. «Բողոքը մերժելու մասին» կոլեգիալ կազմով կայացված որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

ՆՏ վարչական դատարանի հիշյալ որոշումը 20.10.2009թ. դիմողի կողմից բողոքարկվել է ՆՏ վճռաբեկ դատարան: ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 18.11.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Վիճարկվող նորմի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկներն ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ ՆՏ դատավարական օրենսդրության համակարգում միայն ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքն է հայցվորի համար նախատեսում առաջին աստիճանի դատարանի հայցադիմում ներկայացնելիս այն եւ կից փաստաթղթերը հնարավոր պարասխանողի կողմից սրանալը հավասարող ապացույցի ներկայացման պարտականություն: Ընդ որում, դիմողը նշում է, որ նշված պարտականությունը կրում են միայն վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի դեմ հայց ներկայացնող անձինք: Իսկ վարչական մարմնի կողմից անձի դեմ հայց ներկայացվելու դեպքում վարչական դատարանը լիազորված է հայցադիմումն ընդունել վարույթ, եթե բացակայում է անձի կողմից հայցն սրանալը հավասարող ապացույցը, սակայն առկա է միջնորդություն՝ դատարանի կողմից պարասխանողի վերջին հայրնի բնակության կամ գրանցման վայրի համայնքի ղեկավարին այն ուղարկելու մասին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով ներկայացվող ձեւական պահանջները ծանրաբեռնում են անձին այն աստիճան, որ սահմանափակում են մարդու եւ քաղաքացու՝ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի բաղադրարարները հանդիսացող՝ դատարանի մատչելիության եւ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իր գործի քննության իրավունքը:

4. Ըստ պարասխանողի՝ պետությունը կարող է կանոնակարգել դատական պաշտպանության իրավունքի իրականացման ընթացակարգը՝ այդ իրավունքը կրողին ներկայացնելով օրենսդրական ամրագրում սրացած հստակ պայմաններ: Ավելին, այդ պայմաններն ուղղված են դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը, քանի որ ձեւավորում են այն նվազագույն պարտադիր նախադրյալները, որոնք անհրաժեշտ են դատարանի համար արդարադատության իր

գործառույթն արդյունավետ իրացնելու համար: Վիճարկվող դրույթում ներկայացվող պահանջն ուղղակիորեն կոչված է վարչական դատավարությունում իրավահավասարության սկզբունքի կենսագործմանը, յուրաքանչյուր կողմի համար քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորության երաշխավորմանը: Նայցվորին ներկայացվող խնդրո առարկա պահանջը պարասխանողին եւ երրորդ անձանց հնարավորություն է փալիս ծանոթանալ հայցվորի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին եւ դրանց վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել իրենց նկատառումները:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ խնդրո առարկա պահանջը հատուկ է միայն վարչական դատավարությանը, պարասխանողը փաստարկում է, որ նման մոտեցումը պայմանավորված է վարչական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես դրա սուբյեկտներով, ինչպես նաև այդ իրավահարաբերությունների այլ առանձնահատկություններով:

5. ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 աշխարակարգային որոշման 6-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՆՏ Սահմանադրության 101 հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարանի դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության փրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Ինչպես նշվեց, դիմումը կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը.

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից **կիրառվել է վիճարկվող օրենքի դրույթը.**

- որի նկատմամբ վիճարկվող օրենքի դրույթը **կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,**

- որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները»: Նիշյալ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացա-

կայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը **սահմանադրական դատարանի դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:**

ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով **«օրենքի դրույթի կիրառում»** հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 04.04.2008թ. ՄԴՈ-747 որոշման մեջ: Վերջինիս 5-րդ կետում մասնավորապես արտահայտված է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման փաստակյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ձեւին եւ բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 72 եւ 73-րդ հոդվածներով: Օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է հայցադիմումը վերադարձնելու հիմքերը, իսկ 79-րդ հոդվածը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը: Օրենսգրքի 72, 73 եւ 78-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ 72 եւ 73-րդ հոդվածների պահանջները, այդ թվում՝ վիճարկվող նորմով սահմանված պահանջը, չպահպանելու իրավական հետեւանքը վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է: Իսկ 79-րդ հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի առկայության դեպքում առաջանում է այլ իրավական հետեւանք, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժվում է:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական դատարանը, կիրառելով ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 4-րդ կետերը, 12.09.2009թ. կայացրել է **«Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին»** որոշում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործով հայցվոր Արտակ Զեյնալյանն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների փաստակյունից չի հանդիսանում ՆՏ վարչական դատարան

դիմելու իրավունք ունեցող սուբյեկտը՝ իր իրավունքների խախտման փաստի բացակայության պարճառաբանությամբ: Նույն դատարանը կոլեգիալ կազմով 28.09.2009թ. կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ հիմնավոր է համարել վերոնշյալ որոշման պարճառաբանությունները: Իսկ ՏՏ վճռաբեկ դատարանի՝ 18.11.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերահաստատվել է ՏՏ վարչական դատարանի՝ կոլեգիալ կազմով 28.09.2009թ. կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը:

Նիմք ընդունելով իր՝ 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշման 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏՏ վարչական դատարանի կողմից դիմողի հայցադիմումի առնչությամբ կայացվել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում, իսկ վիճարկվող նորմով սահմանված պահանջի չկատարումը հանգեցնում է ոչ թե հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ հայցադիմումը վերադարձնելուն՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ կիրառվել է նրա համար կոնկրետ իրավական հետեւանքներ առաջացրել են 79-րդ հոդվածի համապատասխան դրույթները:

6. Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշման մեջ անդրադառնալով սահմանադրական կոնկրետ վերահսկողության առանձնահատկություններին՝ նշել է. «Եթե նախնական եւ հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, **մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը**: ... Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաեւ **անհատական շահերի պաշտպանության խնդիրը**»:

Միաժամանակ, 2010թ. հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում Կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի վերլուծությունը վկայում է նաև, որ խնդրո առարկա հանրային-իրավական վեճը, ըստ էության, սպառված է, եւ այդ պարագայում դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հեղափոխում սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ: Ուստի հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի քննարկումը խնդրո առարկա գործի լուծման փեսանկյունից որեւէ գործնական իրավական հետեւանքի հանգեցնել չի կարող:

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով դիմող ֆիզիկական անձը **սահմանադրական դատարանի դիմելու իրավասու սուբյեկտ չէ**, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների ընդունած դատական ակտով:

Տիմք ընդունելով վերոշարադրյալը եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

30 նոյեմբերի 2010 թվականի
ՍԳՈ-927